



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» մարտի 2015թ.

N 40

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 03-ին հերթական ընտրությունների ընթացքում իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման և քրեական գործերով նախաքննություն կատարելու նպատակով ժամանակավոր քննչական խումբ ստեղծելու մասին

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» թիվ ՆՀ-15-Ն առ 12.02.2015 թ. հրամանագիրը, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածով և ԼՂՀ Կառավարության թիվ 117-Ն առ 04.03.2015 թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացում ընտրական հանձնաժողովների անցկացելու մասին» որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրությունների անցկացման ընթացքում, իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման, համակարգումն ու միասնական պրակտիկան ապահովելու նպատակով ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 39 առ 30.03.2015 թ. հրամանով ԼՂՀ գլխավոր դատախազությունում ժամանակավոր ստեղծված աշխատանքային խմբի հետ համագործակցելու, նշված խախտումների փաստերով նյութերի քննարկման և քրեական գործերով նախաքննությունը արդյունավետ կատարելու համար՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1.Ստեղծել ժամանակավոր քննչական խումբ հետևյալ կազմով՝

- 1) Բարսեղյան Արսեն Գեորգիի - ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի պետ (խմբի ղեկավար)
- 2) Ամիրյան Գրիգորի Սեյրանի - ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ (խմբի անդամ)

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում են ինձ վրա:

3. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղաքապետախազներին:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան